ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.8-2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի Ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 5 (հինգ) հայտ՝

- «ՖՈՐԶԱ» ՍՊԸ-ի,
- «ԿՐԵՈ» ՍՊԸ-ի,
- «Պրոմո Պիար» ՍՊԸ-ի,
- «Բրենդոն» ՍՊԸ-ի,
- «Պրոդիջի» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- «ԿՐԵՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.3 և 2.4 կետերի պահանջներին: Մասնավորապես՝ հայտատու կազմակերպությունը պետք է ունենա թվային և սոցիալական հարթակների վարման, ղեկավարման 5 տարվա փորձ: Միաժամանակ «ԿՐԵՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի 2.4 կետով պահանջվող՝ Armeps ծրագրի տեխնիկական չափորոշիչներ բաժնի՝ կազմակերպության ծրագիրը:
- «Պրոմո Պիար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4 կետի պահանջներին: Մասնավորապես՝ բացակայում է Հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ:
- «Բրենդոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.3 և 2.4 կետերի պահանջներին: Մասնավորապես՝ Ծրագրում չափորոշիչներն ամբողջությամբ արտացոլված չեն՝ ըստ հայտի: Միաժամանակ, Armeps ծրագրի տեխնիկական չափորոշիչներ բաժնում ստորագրված չէ ներգրավվող մասնագետների ցանկը:
- «ՖՈՐԶԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4.1 կետի պահանջներին: Մասնավորապես՝ Ծրագրում բացակայում է թիրախային երկրներում իրականացվելիք միջոցառումների մասին տեղեկատվությունը:

3. «Պրոդիջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված չափորոշիչներին, սակայն ֆինանսական նախահաշիվը ունի խմբագրման կարիք: Մասնավորապես առաջարկվում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառման իրականացման աշխատանքները սկսվելու են պայմանագրի կնքման պահից, վերախմբագրել և ներկայացնել Ծրագրի իրականացման ժամկետները և բյուջեն՝ 10 ամսվա կտրվածքով:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված հրավերի պահանջներին չհամապատասխանող 4 (չորս) կազմակերպության՝

- «ՖՈՐԶԱ» ՍՊԸ-ի,
- «ԿՐԵՈ» ՍՊԸ-ի,
- «Պրոմո Պիար» ՍՊԸ-ի,
- «Բրենդոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Պրոդիջի» ՍՊԸ**-ն:

3. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի **2.8** կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման համար հաղթող ճանաչվող **«Պրոդիջի» ՍՊԸ**-ի հետ՝ նախահաշվային փաստաթղթերի վերախմբագրված տարբերակը ներկայացնելու դեպքում:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____